

Luys Lnyu®



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ - 2025

Հաշվեկտրային «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի
(2025թ.) հիման վրա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	1
1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	3
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ	7
3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	10
4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ	13
ԱՄՓՈՓՈՒՄ	16

ՆԱԽԱԲԱՆ

Տնտեսական և քաղաքական ազատությունների ապահովման հիմնախնդիրը հասարակական զարգացման ներկայիս փուլում մշտապես պետք է գտնվի երկրների իշխանությունների ուշադրության կենտրոնում: Որպես կանոն՝ բոլոր երկրներում խրախուսվում է, որպեսզի ազգային մասնագիտացված կառույցներն ու հետազոտական հաստատությունները զբաղվեն տնտեսական ազատության ասպարեզի հիմնախնդիրների վերհանմամբ, դրանց չափմամբ և դինամիկայի վերլուծությամբ: Այնուամենայնիվ, միջժամանակային և միջերկրային համեմատությունների համար առավել կարևորվում են միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից պատրաստվող վերլուծությունները, քանի որ դրանք լայնորեն ճանաչված են, իսկ նրանց կողմից օգտագործվող մեթոդաբանությունը համընդհանուր ընդունված է: Այդպիսի առավել հայտնի կազմակերպություններից մեկը «Հերիթեյջ» հիմնադրամն է (The Heritage Foundation), որը 1995 թվականից ի վեր հրապարակում է «Տնտեսական ազատության ինդեքս» ամենամյա զեկույցների շարքը:

Օրերս հրապարակվել է այս շարքի 31-րդ ամենամյա զեկույցը՝ «Տնտեսական ազատության ինդեքս - 2025»¹ (այսուհետ՝ Զեկույց), որտեղ դիտարկվել են 184 երկրներ, որոնցից 176-ի համար, 2023թ. հուլիսի 1-ից 2024թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա, գնահատվել է տնտեսական ազատության մակարդակը: Ինչպես սովորաբար, Զեկույցն անդրադարձել է համաշխարհային տնտեսական ազատության միտումներին, ինչպես նաև տարածաշրջանային և առանձին երկրների մակարդակում առկա տնտեսական մարտահրավերներին ու ձեռքբերումներին: Այն ընդգծում է, որ 2024 թվականը նույնպես լի էր լուրջ տնտեսական ու քաղաքական ցնցումներով, որոնք ազդեցություն են ունեցել տնտեսական ազատության վրա: Զեկույցում անդրադարձ է կատարվում մի շարք իրադարձությունների, որոնք խոչընդոտել են տնտեսության ազատ զարգացմանը՝ շարունակվող ռազմական հակամարտություններից և աշխարհաքաղաքական լարվածությունից մինչև որոշ երկրներում տնտեսական քաղաքականության սահմանափակումները:

Համաձայն Զեկույցի՝ 2024թ. տնտեսական ազատության համաշխարհային ինդեքսը աճել է 1.1 միավորով և կազմել 59.7 միավոր, սակայն համաշխարհային տնտեսությունը որպես ամբողջություն՝ մնում է դեռևս «հիմնականում ոչ ազատ», քանի որ ինդեքսը դեռևս փոքր է 60-ից:

¹ Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝

https://static.heritage.org/index/pdf/2025/2025_indexofeconomicfreedom.pdf

Զեկույցում նշվում է, որ տնտեսական ազատության բարելավման և բարեկեցության աճի միջև առկա բացահայտ դրական կապը շարունակում է պահպանվել:

Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը (այսուհետ՝ SUH) նախորդ տարվա համեմատ աճել է 0.5 միավորով և կազմել 65.4 միավոր: Չնայած SUH-ի աճին, համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը նահանջել է միանգամից 10 հորիզոնականով և տնտեսական ազատությամբ 57-րդն է աշխարհում:


«Լույս» հիմնադրամը, կարևորելով զեկույցների շարքի դերը, յուրաքանչյուր տարվա զեկույցի հրապարակումից հետո կատարում է դրա վերաբերյալ վերլուծություն², որի շրջանակում ներկայացվում են ինչպես գլոբալ, այնպես էլ Հայաստանի տնտեսական ազատության վերաբերյալ հիմնական միտումները, զարգացումները և համեմատական տվյալները: Սույն հաշվետվությունում նախ ներկայացված է տնտեսական ազատության ինդեքսի ընդհանուր նկարագիրը, դրա մեթոդաբանական հիմքերը և հաշվարկման առանձնահատկությունները: Այնուհետև անդրադարձ է կատարված 2025թ. SUH-ի վերաբերյալ համաշխարհային տեղեկատվությանը, ինչպես նաև Զեկույցում արծարծված գլոբալ հիմնահարցերին (այդ թվում՝ տնտեսական ազատության ժամանակակից միտումներին, տարբեր երկրների միջև տնտեսական մրցակցության առումով առկա տարբերություններին, տնտեսական ազատության ընդհանուր մակարդակի վրա առանձին երկրների տնտեսական քաղաքականության ազդեցությանը և այլն): Հաշվետվության հաջորդ մասը նվիրված է Հայաստանի SUH-ի, դրա բաղադրիչների և վերջին տարիների դինամիկայի ներկայացմանը: Առանձին մասով ներկայացված են Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումները: Հաշվետվությունն ավարտվում է Զեկույցի վերաբերյալ կատարված ուսումնասիրության կարևոր արդյունքների ու եզրահանգումների հակիրճ ներկայացմամբ:

² 2019-ից ի վեր կատարված բոլոր վերլուծությունները հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ <https://www.luys.am/...drangeseach=0>:

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական ազատության ինդեքսն իրենից ներկայացնում է ագրեգացված ցուցանիշ, որը հաշվարկվում է որպես 12 ենթաինդեքսների միջին թվաբանական: Այդ ենթաինդեքսները խմբավորված են 4 խմբերում՝ օրենքի գերակայություն, պետական հատվածի կշիռ, կարգավորումների արդյունավետություն և շուկայի բացություն (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Տնտեսական ազատության ինդեքսի կառուցվածքը



ԽՈՒՄԲ 1 - ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Առաջին խումբը «Օրենքի գերակայություն» է, որն ընդգրկում է երեք ենթաինդեքսներ:

1. Այս խմբում ընդգրկված ենթաինդեքսներից առաջինը «**Սեփականության իրավունքի պաշտպանություն**» է, որով գնահատվում է, թե երկրի օրենսդրական դաշտով ինչ չափով է հնարավորություն ընձեռված ձեռք բերելու, տիրապետելու և տնօրինելու մասնավոր սեփականություն, գործող օրենսդրությունը որքանով է երաշխավորում այդ իրավունքները, և իշխանությունը որքանով է ապահովում օրենսդրական դաշտի նորմալ գործողությունը: Այս ենթաինդեքսը հաշվարկվում է որպես երեք ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- մասնավոր (նյութական) սեփականության բռնագրավման ռիսկ,
- մտավոր սեփականության պաշտպանվածության մակարդակ.

- պայմանագրերի, սեփականության իրավունքի և օրենքների կիրառելիություն:

2. Այս խմբի հաջորդ ենթախնդրերը «Արդարադատության արդյունավետություն» է, որն օգտագործվում է քաղաքացիների իրավունքների ապահովման և նրանց հակաօրինական գործողություններից պաշտպանության մակարդակը գնահատելու նպատակով: Այն հաշվարկվում է՝ հաշվի առնելով երեք հիմնական գործոնների միջինացված գնահատականը՝

- դատական համակարգի անկախություն,
- դատական գործընթացի որակ,
- հանրային ծառայությունների որակի և քաղաքացիական ծառայության անկախության վերաբերյալ ընկալումներ:

3. «Կոռուպցիայի բացակայություն» ենթախնդրերը հաշվարկվում է որպես երեք ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանական: Այդ ենթագործոններն են՝

- կոռուպցիայի ընկալման մակարդակը,
- կաշառակերության ռիսկը,
- կոռուպցիայի (ներառյալ էլիտաների և այլ խմբերի կողմից պետության «զավթումը») վերահսկումը:

ԽՈՒՄԲ 2 - ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿՇԻՌ

4. «Հարկային բեռ» ենթախնդրերը գնահատում է, թե որքանով են հարկային պարտավորությունները սահմանափակում տնտեսական գործունեության հնարավորությունները: Այն նույնպես երեք ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանականն է: Այդ ենթագործոններն են՝

- եկամտային հարկի դրույքաչափի վերին սահմանը,
- շահութահարկի դրույքաչափի վերին սահմանը,
- հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը:

5. «Պետական ծախսեր» ենթախնդրերը գնահատում է, թե որքանով են պետական ծախսերը սահմանափակում տնտեսական ազատությունը: Ընդունված է համարել, որ պետական ծախսերի բարձր մակարդակը մասնավոր հատվածի տնտեսական ակտիվության նվազման տեսանկյունից ռիսկեր է պարունակում: Այս ենթախնդրերը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջինացված արժեքները և հաշվարկվում է դրանց ոչ գծային ստանդարտացման հիման վրա:

6. «Հարկաբյուջետային կայունություն» ենթաինդեքսը հաշվարկվում է որպես երկու ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների կշռված միջին՝

- պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին արժեք (ենթաինդեքսը հաշվարկելիս այս ենթագործոնին տրվում է 80% կշիռ),
- պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն (ենթաինդեքսը հաշվարկելիս այս ենթագործոնին տրվում է 20% կշիռ):

ԽՈՒՄԲ 3 - ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

7. «Գործարարության ազատություն» ենթաինդեքսով գնահատվում է, թե երկրի իրավակարգավորումների և ենթակառուցվածքների համակարգերը որքանով են նպաստում ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ իրականացմանը և հաշվարկվում է չորս ցուցանիշների հիման վրա՝

- էլեկտրաէներգիայի հասանելիություն,
- գործարար միջավայրի ռիսկայնություն,
- իրավակարգավորումների որակ,
- տնտեսական գործընթացներում կանանց ներգրավվածություն:

8. «Աշխատանքի ազատություն» ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվում են ամենամեծ թվով ենթագործոնները: Այն հետևյալ ինը ենթագործոնների գնահատմամբ ստացվող արժեքների միջին թվաբանականն է՝

- նվազագույն աշխատավարձ,
- արհմիությունների իրավունքներ,
- ամենամյա վճարովի արձակուրդի հասանելիություն,
- հասարիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման վերաբերյալ ծանուցման ժամկետ,
- հասարիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման պարտադիր վճարի չափ,
- աշխատանքի արտադրողականություն,
- աշխատուժի մասնակցության գործակից,
- արտաժամյա աշխատանքի սահմանափակումներ,
- հասարիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման իրավական կարգավորման առկայություն:

9. «Դրամավարկային ազատություն» ենթաինդեքսով գնահատվում է գների կայունության ապահովման հարցում դրամավարկային քաղաքականություն

իրականացնող մարմինների ազատությունը: Դրա հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ երկու ենթագործոնները՝

- գնաճի տեմպ (վերցվում է վերջին երեք տարիների կշռված միջինը).
- պետության կողմից գների արհեստական վերահսկման մեխանիզմի առկայություն:

ԽՈՒՄԲ 4 - ՇՈՒԿԱՅԻ ԲԱՅՈՒԹՅՈՒՆ

10. «Առևտրի ազատություն» ենթաինդեքսով «չափվում են» միջազգային շուկաներում ազատ առևտուր իրականացնելու գործում տնտեսական սուբյեկտների հնարավորությունները: Դրա հաշվարկման համար օգտագործվում է երկու ցուցանիշ՝

- մաքսատուրքի միջին կշռված դրույքաչափը.
- ոչ մաքսային խոչընդոտների որակական գնահատականը:

11. «Ներդրումային ազատություն» ենթաինդեքսի նպատակը ներդրումային կապիտալի շարժի վրա պետականորեն դրված սահմանափակումների մակարդակը գնահատելն է: Այն հաշվարկելիս առավելագույն 100 միավորից հանվում է յուրաքանչյուր սահմանափակման համար տրվող տուգանային միավորը (տուգանային միավորը կախված է տվյալ սահմանափակման «ազդեցիկությունից»):

12. «Ֆինանսական ազատություն» ենթաինդեքսը ցույց է տալիս բանկային գործունեության արդյունավետության և պետական վերահսկողությունից ու միջամտությունից անկախության աստիճանը: Այն հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

- ֆինանսական ծառայությունների պետական կարգավորման աստիճան.
- բանկերի և այլ ֆինանսական ինստիտուտների գործունեության մեջ պետական միջամտության (ուղղակի կամ անուղղակի տնօրինմամբ) աստիճան.
- վարկերի տեղաբաշխման վրա կառավարության ազդեցություն.
- ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացածություն.
- միջազգային մրցակցության առումով բացություն:

SUԻ-ի ենթաինդեքսներից յուրաքանչյուրը նախապես գնահատվում է որոշակի վիճակագրական ցուցանիշների ագրեգացման հիման վրա և այնուհետև ստանդարտացվում 0-100 միջակայքում: SUԻ-ն հաշվարկվում է հաջորդ քայլում՝ որպես այդ ենթաինդեքսների միջին թվաբանական: SUԻ-ի արժեքից ելնելով՝ երկրները դասակարգվում են հինգ խմբերում:

- Եթե ՏԱԻ-ին 80 և ավելի միավոր է, ապա երկիրը համարվում է տնտեսապես **«ազադ»**:
- 70-79.9 միջակայքի ՏԱԻ ունեցող երկրները համարվում են տնտեսապես **«հիմնականում ազադ»**:
- Եթե ՏԱԻ-ին 60-69.9 միջակայքում է, երկիրը համարվում է տնտեսապես **«չափավոր ազադ»**:
- 50-59.9 միավոր ՏԱԻ ունեցող երկրները դասվում են տնտեսապես **«հիմնականում ոչ ազադ»** խմբին:
- 50 միավորից պակաս ՏԱԻ-ով երկրները համարվում են տնտեսապես **«ճնշված»**:

Ի դեպ, ընթացիկ տարվա ՏԱԻ-ն հաշվարկվում է նախորդ տարվա առաջին և նախանախորդ տարվա երկրորդ կիսամյակի տվյալների հիման վրա:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2025 թվականի զեկույցում դիտարկվել է 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածը՝ 184 երկրների համար: Դրանցից 8 երկրների համար ՏԱԻ չի հաշվարկվել, քանի որ դրանց համար հաջողվել է հաշվարկել ինդեքսի 12 ենթաինդեքսներից միայն 3-ը:

Զեկույցում նշվում է, որ համաշխարհային տնտեսական ազատության միջին միավորը նախորդ տարվա համեմատ աճել է 1.1 կետով՝ հասնելով 59.7-ի: Այնուամենայնիվ, համաշխարհային տնտեսությունը, որպես ամբողջություն, մնում է **«հիմնականում ոչ ազադ»**: Հիշեցնենք, որ այն մինչև 2022 թվականը եղել է **«չափավոր ազադ»**:


Համաձայն Զեկույցի՝ շատ երկրներում տնտեսական ազատության սկզբունքներից կտրուկ և անհեռատես հրաժարումը վտանգել է տնտեսական արագ վերականգնումը, երկարաժամկետ տնտեսական կայունությունն ու զարգացումը: Մասնավորապես, որպես տնտեսական լճացմանը նպաստող գործոն՝ նշվում է աշխարհի շատ երկրների՝ մեծ պարտքով ծանրաբեռնված լինելու հանգամանքը:

Զեկույցում նշվում է, որ տնտեսական ազատությունը դրական կոռելյացիա ունի ինչպես բարեկեցության, այնպես էլ տնտեսական զարգացածության հետ (տնտեսական աճն է՝ «ճշգրտված» կյանքի տևողությամբ, առողջապահության և կրթության հասանելիությամբ, շրջակա միջավայրի պաշտպանվածությամբ, ժողովրդավարական ինստիտուտների կայացվածությամբ և այլ սոցիալական

գործոններով): Վիճակագրությունը հաստատում է այս պնդումների իրավացիությունը. բնակչության կենսամակարդակն արտահայտող մեկ շնչի հաշվով եկամուտները տնտեսապես «ազատ», «հիմնականում ազատ» և «շափավոր ազատ» երկրներում միջին հաշվով ավելի քան կրկնակի գերազանցում են մնացած երկրների և ավելի քան եռակի՝ տնտեսապես «ճնշված» երկրների ցուցանիշին:

Գծապատկեր 2-ից երևում է, որ ըստ 2025թ. ՏԱԻ-ի տնտեսապես «ազատ» է ընդամենը 3 և «հիմնականում ազատ»՝ 26 երկիր: «Չափավոր ազատ» է 58 երկիր: Մնացած 89 երկրների (կամ դիտարկված երկրների կեսից ավելի) ինդեքսը 60-ից ցածր է: Դրանցից 60-ն ունեն «հիմնականում ոչ ազատ» տնտեսություն, իսկ 29-ը՝ «ճնշված»:


Գծապատկեր 2. Տնտեսական ազատության աստիճանն աշխարհում 2025 թվականին՝ ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման, երկիր



Վարկանիշային աղյուսակի առաջին եռյակը նախորդ տարվա համեմատ չի փոխվել: Առաջատարը **Սինգապուրն** է, որի ՏԱԻ-ն կազմում է 84.1 միավոր, երկրորդը **Շվեյցարիան** է՝ 83.7 միավորով, իսկ երրորդ տեղում **Իռլանդիան** է՝ 83.1 միավորով: **Թայվանը**, որը 2024-ի զեկույցում չորրորդ տնտեսապես «ազատ» երկիրն էր, այս տարի նահանջել է «հիմնականում ազատ» երկրների խումբ, քանի որ այդ երկրի ՏԱԻ-ն նվազել է 0.4 միավորով և կազմում է 79.7 միավոր: Վարկանիշային աղյուսակի ստորին եռյակը նույնպես չի փոխվել՝ 174-րդ երկիրը **Վենեսուելան** է 27.6 միավորով, 175-րդը՝ **Կուբան**՝ 25.4 միավորով և վերջինը՝ **Հյուսիսային Կորեան**՝ 3.0 միավորով:

Գծապատկեր 3-ում ներկայացված են աշխարհի հինգ տարածաշրջաններում 2023-2025թթ. ՏԱԻ-ի միջին գնահատականները:

Գծապատկեր 3. ՏԱԻ-ի արժեքները ՀՀ-ում, աշխարհում և տարբեր տարածաշրջաններում, 2023-2025թթ.



Ինչպես և նախորդ տարիներին, այս տարի ևս ամենաբարձր միջին ՏԱԻ-ով տարածաշրջանը Եվրոպան է՝ 68.5 միավորով, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 1.3 միավորով, սակայն դեռևս 1.6 միավորով ցածր է 2021-ի արդյունքից: Ի դեպ, բոլոր հինգ տարածաշրջաններում էլ արձանագրվել է տարածաշրջանային միջին ՏԱԻ-ի աճ:

2025-ին ևս (2022-ից սկսած) տարածաշրջաններից ոչ մեկը տնտեսապես «ազալ» կամ «հիմնականում ազալ» չէ: Միայն մեկ տարածաշրջան՝ «Եվրոպան», է դասակարգվում որպես «չափավոր ազալ», իսկ մնացած չորս տարածաշրջանները «հիմնականում ոչ ազալ» են:

Հայաստանի ՏԱԻ-ն իր՝ «Եվրոպա» տարածաշրջանի միջին գնահատականին զիջում է 3.1 միավորով: Ուշագրավ է, որ չնայած Հայաստանի ՏԱԻ-ն 2024-ի համեմատ աճել է 0.5 միավորով, տարածաշրջանային միջինից ճեղքվածքն ավելացել է՝ 2024-ի 2.3 միավորից 2025-ին հասնելով 3.1-ի: Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանի բարելավման տեմպերն էապես զիջում են աշխարհի և բոլոր տարածաշրջանների բարելավման միջին տեմպերին: Բանը նրանում է, որ երկրների մեծ մասը կորոնավիրուսային համավարակի պատճառով արձանագրված զգալի անկումից հետո բավական արագ վերականգնվում է, մինչդեռ Հայաստանում 2021-ից հետո երեք տարի շարունակ, ընդհանուր 7 միավորի հետընթացից հետո ՏԱԻ-ն 2025-ին 2024-ի համեմատ ավելացել է ընդամենը 0.5 միավորով՝ ավելի քան կրկնակի դանդաղ, քան համաշխարհային միջին ՏԱԻ-ի բարելավումը: Դա է պատճառը, որ չնայած ՀՀ ՏԱԻ-ն համաշխարհային միջին գնահատականից բարձր է, սակայն համաշխարհային միջինի նկատմամբ ևս դրական տարբերությունը նախորդ տարվա համեմատ նվազել է:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Երեք տարի անընդմեջ նվազումից հետո 2025-ին Հայաստանի ՏԱԻ-ն փոքր աճ է գրանցել, սակայն այդ աճն ավելի քան կրկնակի դանդաղ է համաշխարհային միջին աճից: 2025 թվականին ՀՀ ՏԱԻ-ն կազմել է 65.4 միավոր՝ նախորդ տարվա ցուցանիշից 0.5 միավորով ավելի, սակայն 6.5 միավորով պակաս, քան նախաքովիոյան՝ 2021 թվականի ցուցանիշը. հիշեցնենք, որ 2021-ի ՏԱԻ-ն հաշվարկվել է 2019-ի երկրորդ և 2020-ի առաջին կիսամյակի տվյալների հիման վրա:

Չնայած ՏԱԻ-ի աճին, համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը նահանջել է միանգամից 10 հորիզոնականով և տնտեսական ազատությամբ 57-րդն է աշխարհում: Պատճառը, ինչպես նշվեց, այն է, որ Հայաստանի բարելավման տեմպերն էապես զիջում են աշխարհի և բոլոր տարածաշրջանների բարելավման միջին տեմպերին:

Չորրորդ տարին անընդմեջ Հայաստանը դասակարգվում է որպես տնտեսապես «չափավոր ազատ» երկիր: Հիշեցնենք, որ 2017, 2020 և 2021 թվականներին Հայաստանն ընդգրկված է եղել տնտեսապես «հիմնականում ազատ» երկրների խմբում:

Մի քանի տարի շարունակ զեկույցներում նշվում է, որ «Հայաստանում տնտեսական ազատության հիմքերը ամուր չեն պահպանվում անկախ դատական համակարգի կողմից, իսկ կոռուպցիան նվազեցնում է տնտեսական զարգացման հնարավորությունները»:

Գծապատկեր 4. ՏԱԻ-ն Հայաստանում և ՀՀ դիրքը՝ ըստ ՏԱԻ-ի, 2017-2025թթ.



2024 և 2025 թվականներին Հայաստանի ՏԱԻ-ի ենթաինդեքսները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. ՏԱԻ-ն և դրա ենթաինդեքսները ՀՀ-ում, 2024-2025թթ.

		2024թ.	2025թ.	Փոփոխությունը (+/-)	
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ		64.9	65.4	↑	0.5
Օրենքի գերակայություն	Սեփականության իրավունքի պաշտպանություն	50.3	49.9	↓	-0.4
	Արդարադատության արդյունավետություն	31.6	31.3	↓	-0.3
	Կոռուպցիայի բացակայություն	50.0	50.4	↑	0.4
Պետական հատվածի կշիռ	Հարկային բեռ	87.6	88.1	↑	0.5
	Պետական ծախսեր	75.5	77.6	↑	2.1
	Հարկաբյուջետային կայունություն	69.1	81.3	↑	12.2
Կարգավորումների արդյունավետություն	Գործարարության ազատություն	69.2	73.0	↑	3.8
	Աշխատանքի ազատություն	58.9	59.2	↑	0.3
	Դրամավարկային ազատություն	67.5	72.2	↑	4.7
Շուկայի բացություն	Առևտրի ազատություն	73.6	72.0	↓	-1.6
	Ներդրումային ազատություն	75.0	70.0	↓	-5
	Ֆինանսական ազատություն	70.0	60.0	↓	-10

Երկու ենթաինդեքսների՝ «Հարկային բեռի» և «Հարկաբյուջետային կայունության» գծով Հայաստանը համարվում է տնտեսապես «ազատ» երկիր: Հինգ ենթաինդեքսների գծով Հայաստանը «հիմնականում ազատ» է, 1-ի գծով՝ «չափավոր ազատ», 2-ի գծով՝ «հիմնականում ոչ ազատ», ևս 2-ի գծով՝ «ճնշված»: Հայաստանի երկու ենթաինդեքսները՝ «Սեփականության իրավունքի

պաշտպանությունը» և «Արդարադատության արդյունավետությունը» ավելի ցածր են, քան դրանց համաշխարհային միջին մակարդակը (համապատասխանաբար 53.1 և 48.4 միավոր): Ի դեպ, նախորդ տարվա համեմատ այս երկու ենթաինդեքսներն էլ նվազել են՝ համապատասխանաբար 0.4 և 0.3 միավորով:

Ենթաինդեքսների 4 խմբերից ամենաանբարենպաստը շարունակում է մնալ «Օրենքի գերակայություն» խմբի վիճակը: Ընդ որում, Հայաստանն այս տարի խմբի երեք ենթաինդեքսներից արդեն երկուսի գծով է համարվում տնտեսապես **«ճնշված»** (2024-ին միայն մեկի գծով էր): 2025-ի զեկույցում նույնպես նշված է, որ «Հայաստանում օրենքի ընդհանուր գերակայությունը թույլ է»:

2024-ի համեմատ «Հարկաբյուջետային կայունություն» և «Պետական ծախսեր» ենթաինդեքսների զգալի աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ նվազել են պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին արժեքը և պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը (այդ մասին նշված է նաև Զեկույցում): Այսինքն, նկատի ունենալով, որ 2025-ին և առնվազն հետագա երկու թվականներին նախատեսվում է վերոհիշյալ ցուցանիշների զգալի աճ, կարելի է ակնկալել, որ առաջիկա տարիներին այս ենթաինդեքսները նվազելու են:

«Գործարարության ազատություն» ենթաինդեքսի՝ նախորդ տարվա համեմատ աճն ամենայն հավանականությամբ հիմնականում պայմանավորված է տնտեսական գործընթացներում կանանց ներգրավվածության աճով, իսկ «Դրամավարկային ազատություն» ենթաինդեքսի աճի հիմնական պատճառը, թերևս, ցածր գնաճն է:

«Շուկայի բացություն» խմբի բոլոր երեք ենթաինդեքսների գծով զգալի նվազում է արձանագրվել: Ընդ որում, խմբի երկու ենթաինդեքսները նվազելով հասել են երկրների տվյալ խմբի նվազագույն շեմային արժեքին: Մասնավորապես, «Ներդրումային ազատություն» ենթաինդեքսը 70 միավոր է՝ **«հիմնականում ազատ»** երկրների խմբի ամենացածր արժեքը, իսկ «Ֆինանսական ազատություն» ենթաինդեքսի 60.0 արժեքը **«չափավոր ազատ»** երկրների խմբի ստորին շեմն է: Ընդ որում, վերջին մեկ տարվա ընթացքում այս ենթաինդեքսը նվազել է միանգամից 10 միավորով, ինչի արդյունքում Հայաստանը դրա գծով **«հիմնականում ազատ»** երկրների խմբից նահանջել է **«չափավոր ազատ»** երկրների խումբ: Զեկույցում նշված է, որ ֆինանսական հատվածը բավականաչափ զարգացած չէ (բացառություն կարելի է համարել բանկային համակարգը) և գտնվում է պետական խիստ վերահսկողության ներքո:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հաշվետվության այս մասը նվիրված է Հայաստանի և տարբեր դասակարգումներով խմբակից երկրների միջև համեմատական վերլուծությանը:

Աղյուսակ 2-ից երևում է, որ «Եվրոպա» տարածաշրջանի վարկանիշային աղյուսակում Հայաստանը նահանջել է 4 հորիզոնականով և զբաղեցնում է 30-րդ տեղը: Ինչպես նշվել էր վերը, պատճառն այն է, որ Հայաստանի ՏԱԻ-ի բարելավման տեմպերն էապես զիջում են տարածաշրջանի միջին տեմպերին: **Բացի Հայաստանից, Եվրոպական տարածաշրջանի ևս 38 երկրների ՏԱԻ-ն աճել է, ընդ որում նրանցից 31-ի ՏԱԻ-ի աճն ավելի մեծ է, քան Հայաստանինը: Ավելին, տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում դիրքի ամենամեծ նահանջն ունի Հայաստանը:**


Եվրոպայի տարածաշրջանից այս տարի ընդամենը 2 երկիր է (Շվեյցարիան և Իռլանդիան) տնտեսապես *«ազալ»*: Տարածաշրջանի առաջատարները կրկին Շվեյցարիան, Իռլանդիան և Լյուքսեմբուրգն են: Տարածաշրջանի հետնապահներն են՝ Մոլդովան, Թուրքիան, Ռուսաստանը և Բելառուսը:

Աղյուսակ 2. ՏԱԻ-ին Եվրոպայի երկրներում, 2024-2025թթ.

N	Երկիր	ՏԱԻ 2024	ՏԱԻ 2025	ՏԱԻ-ի փոփոխու- թյուն (+/-)	Դիրք 2024	Դիրք 2025	Դիրքի բարելավում/ վատթարացում (+/-)
1	Շվեյցարիա	83.0	83.7	↑ 0.7	1	1	● 0
2	Իռլանդիա	82.6	83.1	↑ 0.5	2	2	● 0
3	Լյուքսեմբուրգ	79.2	79.5	↑ 0.3	3	3	● 0
4	Դանիա	77.8	79.1	↑ 1.3	4	4	● 0
5	Էստոնիա	77.8	78.9	↑ 1.1	5	5	● 0
6	Նորվեգիա	77.5	78.3	↑ 0.8	7	6	↑ 1
7	Նիդեռլանդներ	77.3	78.2	↑ 0.9	8	7	↑ 1
8	Շվեդիա	77.5	77.9	↑ 0.4	6	8	↓ -2
9	Ֆինլանդիա	76.3	77.0	↑ 0.7	9	9	● 0
10	Լիտվա	72.9	74.6	↑ 1.7	10	10	● 0
11	Կիպրոս	72.3	73.2	↑ 0.9	11	11	● 0
12	Չեխիա	70.2	72.9	↑ 2.7	15	12	↑ 3
13	Իսլանդիա	70.5	72.8	↑ 2.3	14	13	↑ 1
14	Գերմանիա	72.1	71.6	↓ -0.5	12	14	↓ -2
15	Լատվիա	71.5	71.4	↓ -0.1	13	15	↓ -2
16	Պորտուգալիա	68.7	70.5	↑ 1.8	16	16	● 0
17	Ավստրիա	68.4	69.7	↑ 1.3	20	17	↑ 3
18	Մեծ Բրիտանիա	68.6	69.3	↑ 0.7	17	18	↓ -1
19	Բելգիա	65.6	69.0	↑ 3.4	25	19	↑ 6
20	Վրաստան	68.4	69.0	↑ 0.6	19	20	↓ -1
21	Բուլղարիա	68.5	68.8	↑ 0.3	18	21	↓ -3
22	Խորվաթիա	67.3	68.7	↑ 1.4	22	22	● 0
23	Սլովակիա	68.1	68.4	↑ 0.3	21	23	↓ -2
24	Սլովենիա	65.9	68.3	↑ 2.4	24	24	● 0
25	Լեհաստան	66.0	67.1	↑ 1.1	23	25	↓ -2
26	Մալթա	64.5	66.8	↑ 2.3	28	26	↑ 2
27	Ալբանիա	64.8	66.6	↑ 1.8	27	27	● 0
28	Ռումինիա	64.4	66.5	↑ 2.1	29	28	↑ 1
29	Իսպանիա	63.3	66.3	↑ 3.0	30	29	↑ 1
30	Հայաստան	64.9	65.4	↑ 0.5	26	30	↓ -4
31	Ֆրանսիա	62.4	64.4	↑ 2.0	32	31	↑ 1
32	Սերբիա	62.7	64.4	↑ 1.7	31	32	↓ -1
33	Մոնտենեգրո	59.7	63.8	↑ 4.1	39	33	↑ 6
34	Բոսնիա և Հերցեգովինա	62.1	63.5	↑ 1.4	33	34	↓ -1
35	Հյուսիսային Մակեդոնիա	61.4	63.2	↑ 1.8	35	35	● 0
36	Ադրբեջան	61.6	62.5	↑ 0.9	34	36	↓ -2
37	Կոսովո	60.6	61.7	↑ 1.1	37	37	● 0
38	Հունգարիա	61.3	61.4	↑ 0.1	36	38	↓ -2
39	Իտալիա	60.1	60.9	↑ 0.8	38	39	↓ -1
40	Հունաստան	55.1	60.6	↑ 5.5	42	40	↑ 2
41	Մոլդովա	58.5	58.3	↓ -0.2	40	41	↓ -1
42	Թուրքիա	56.2	56.1	↓ -0.1	41	42	↓ -1
43	Ռուսաստանի Դաշնություն	52.0	51.6	↓ -0.4	43	43	● 0
44	Բելառուս	48.4	48.9	↑ 0.5	44	44	● 0


ԵԱՏՄ անդամ-երկրների թվում Հայաստանը ՏԱԻ-ով շարունակում է լինել առաջատարը, սակայն երկրորդ տեղը զբաղեցնող Ղազախստանի նկատմամբ միավորների առավելությունը շարունակաբար կրճատվում է (Գծապատկեր 5): Այս տարի ԵԱՏՄ անդամ երկրներից նվազել է միայն Ռուսաստանի Դաշնության ՏԱԻ-ն: Դիրքի բարելավում ունեցել է միայն Բելառուսը (ընդամենը 1 հորիզոնականով), որը անցյալ տարվանից գտնվում է **«ճնշված»** երկրների խմբում: ԵԱՏՄ անդամ ոչ մի երկրի խմբի փոփոխություն տեղի չի ունեցել:

Գծապատկեր 5. ԵԱՏՄ երկրների ՏԱԻ-ն և վարկանիշային աղյուսակում դիրքը, 2023-2025թթ.



Հայաստանի և մեր հարևան չորս երկրների վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը ներկայացված է Գծապատկեր 6-ում: **Հայաստանը հարևան երկրներից շարունակում է զիջել միայն 69.0 միավոր ՏԱԻ ունեցող և համաշխարհային վարկանիշային աղյուսակի 35-րդ հորիզոնականը զբաղեցնող Վրաստանին:** Երրորդը համաշխարհային վարկանիշային աղյուսակի 75-րդ հորիզոնականում գտնվող Ադրբեջանն է՝ 62.5 ՏԱԻ-ով: Հաջորդը Թուրքիան է, որը 56.1 միավոր ՏԱԻ-ով համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 111-րդ հորիզոնականը: Վերջինը համաշխարհային վարկանիշային աղյուսակի 169-րդ հորիզոնականը զբաղեցնող Իրանն է՝ 42.5 ՏԱԻ-ով:

Գծապատկեր 6. ՀՀ-ի և հարևան երկրների ՏԱԻ-ն և վարկանիշային աղյուսակում դիրքը, 2023-2025թթ.



Աղյուսակ 3-ից երևում է, որ Հայաստանը վարկանիշային դիրքի նահանջի առումով գերազանցում է բոլոր հարևաններին: Հաջորդ վատ արդյունքն ունի Թուրքիան: Հարևաններից որևէ մեկը վարկանիշային դիրքի առաջընթաց չի ունեցել:

Աղյուսակ 3. ՏԱԻ-ի արժեքների և հորիզոնականների փոփոխությունը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2023-2025թթ.

Երկիր	ՏԱԻ					Դիրքը վարկանիշային աղյուսակում				
	Մեծությունը			Փոփոխությունը +/-		Մեծությունը			Փոփոխությունը +/-	
	2023	2024	2025	2023-2024	2024-2025	2023	2024	2025	2023-2024	2024-2025
Հայաստան	65.1	64.9	65.4	-0.2	0.5	50	47	57	-3	10
Վրաստան	68.7	68.4	69.0	-0.3	0.6	35	32	35	-3	3
Թուրքիա	56.9	56.2	56.1	-0.7	-0.1	104	102	111	-2	9
Ադրբեջան	61.4	61.6	62.5	0.2	0.9	75	70	75	-5	5
Իրան	42.2	41.2	42.5	-1.0	1.3	169	169	169	0	0

Նախորդ տարվա համեմատ հարևաններից ոչ մեկը խմբի փոփոխություն չի ունեցել. Վրաստանը և Ադրբեջանն ընդգրկված են «չափավոր ազատ» տնտեսություններով երկրների խմբում: Թուրքիան տնտեսապես «հիմնականում ոչ ազատ» երկիր է: Իրանն այս տարի ևս «ճնշված» երկրների խմբում է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով «Տնտեսական ազատության ինդեքս - 2025» զեկույցի վերաբերյալ ուսումնասիրությունը՝ արժանագրենք.

- 2025 թվականին ՀՀ ՏԱԻ-ն կազմել է 65.4 միավոր՝ նախորդ տարվա ցուցանիշից 0.5 միավորով ավելի, սակայն 6.5 միավորով պակաս, քան 2021 թվականի ցուցանիշը: Երեք տարի անընդմեջ նվազումից հետո

2025-ին Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսն աճ է գրանցել, սակայն այդ աճն ավելի քան կրկնակի դանդաղ է համաշխարհային միջին աճից:

- Հայաստանը տնտեսական ազատությամբ աշխարհի 176 երկրների թվում 57-րդն է: Վարկանիշային աղյուսակում Հայաստանի դիրքը վատթարացել է միանգամից 10 հորիզոնականով՝ չնայած այն բանին, որ գրանցվել է ինդեքսի աճ: Պատճառն այն է, որ այդ աճը էապես զիջում է աշխարհի և բոլոր տարածաշրջանների բարելավման միջին տեմպերին:
«Եվրոպա» տարածաշրջանի վարկանիշային աղյուսակում Հայաստանը նահանջել է 4 հորիզոնականով և զբաղեցնում է 30-րդ տեղը: Տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում Հայաստանի դիրքի նահանջն ամենամեծն է:
- Հայաստանը 2022 թվականից ի վեր դասակարգվում է որպես տնտեսապես «**չափավոր ազատ**» երկիր: Մինչ այդ՝ 2020 և 2021 թվականներին, Հայաստանն ընդգրկված է եղել տնտեսապես «**հիմնականում ազատ**» երկրների խմբում: Մեր երկիրը տնտեսապես «**հիմնականում ազատ**» է համարվել նաև 2017 թվականին:
- 2025-ի զեկույցում ևս նշված է, որ «Հայաստանում տնտեսական ազատության հիմքերը ամուր չեն պահպանվում անկախ դատական համակարգի կողմից, իսկ կոռուպցիան նվազեցնում է տնտեսական զարգացման հնարավորությունները»:
- Տնտեսական ազատության ինդեքսի 12 ենթաինդեքսներից 5-ի գծով Հայաստանը «**հիմնականում ազատ**» է, 1-ի գծով՝ «**չափավոր ազատ**», 2-ի գծով՝ «**հիմնականում ոչ ազատ**», և 2-ի գծով՝ «**ճնշված**»: Հայաստանի երկու ենթաինդեքսները՝ «Սեփականության իրավունքի պաշտպանությունը» և «Արդարադատության արդյունավետությունը» ավելի ցածր են, քան դրանց համաշխարհային միջին մակարդակը: Ի դեպ, նախորդ տարվա համեմատ այս երկու ենթաինդեքսներն էլ նվազել են:
- Ենթաինդեքսների 4 խմբերից ամենաանբարենպաստը շարունակում է մնալ «Օրենքի գերակայություն» խմբի վիճակը: Հայաստանն այս տարի խմբի երեք ենթաինդեքսներից արդեն երկուսի գծով է համարվում տնտեսապես «**ճնշված**»: 2024-ին Հայաստանը միայն մեկ ենթաինդեքսի գծով էր համարվում «**ճնշված**»: 2025-ի զեկույցում նույնպես նշված է, որ «Հայաստանում օրենքի ընդհանուր գերակայությունը թույլ է»:

- «Շուկայի բացություն» խմբի բոլոր երեք ենթահինդեքսների գծով զգալի նվազում է արձանագրվել: Ընդ որում, խմբի երկու ենթահինդեքսները նվազելով հասել են երկրների տվյալ խմբի նվազագույն շեմային արժեքին: Ի դեպ, վերջին մեկ տարվա ընթացքում «Ֆինանսական ազատություն» ենթահինդեքսը նվազել է միանգամից 10 միավորով, ինչի արդյունքում Հայաստանը դրա գծով **«հիմնականում ազատ»** երկրների խմբից նահանջել է **«չափավոր ազատ»** երկրների խումբ:
- 2024-ի համեմատ զգալի բարելավում է արձանագրվել «Հարկաբյուջետային կայունություն» և «Պետական ծախսեր» ենթահինդեքսների գծով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նվազել են պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին արժեքը և պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: **Նկատի ունենալով**, որ համաձայն պաշտոնական տեղեկատվության՝ այս և առնվազն հետագա երկու տարիներին նախատեսված է նշված ցուցանիշների զգալի աճ, կարելի է ակնկալել, որ առաջիկա տարիներին այս ենթահինդեքսները նվազելու են:
- Տնտեսական ազատության համաշխարհային միջին միավորը նախորդ տարվա համեմատ աճել է 1.1 կետով՝ հասնելով 59.7-ի: Այնուամենայնիվ, համաշխարհային տնտեսությունը, որպես ամբողջություն, մնում է **«հիմնականում ոչ ազատ»**: Ի դեպ, այն մինչև 2022 թվականը եղել է **«չափավոր ազատ»**:
- Վարկանիշային աղյուսակի առաջատար եռյակը նախորդ տարվա համեմատ չի փոխվել: Առաջինը **Սինգապուրն** է՝ 84.1 միավոր ինդեքսով, երկրորդ տեղում **Շվեյցարիան** է՝ 83.7 միավորով, իսկ եռյակը եզրափակում է **Իռլանդիան**՝ 83.1 միավորով: Վարկանիշային աղյուսակի ստորին եռյակը նույնպես չի փոխվել՝ **Վենեսուելա** (27.6 միավոր), **Կուբա** (25.4 միավոր) և **Հյուսիսային Կորեա** (3.0 միավոր):
- ԵԱՏՄ անդամ երկրների թվում Հայաստանն այս տարի ևս առաջատար է, սակայն երկրորդ տեղը զբաղեցնող Ղազախստանի ինդեքսի հետ տարբերությունը տարեցտարի կրճատվում է:
- Այս տարի ևս Հայաստանը ՏԱԻ-ով հարևան չորս երկրներից զիջում է միայն Վրաստանին: Հայաստանի վարկանիշային դիրքի նահանջը բոլոր հարևաններից ավելի մեծ է:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: